«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Գործնական աշխատանքի կազմակերպումը մայրենիի դասերին

Առարկան՝ մայրենի

Հետազոտող ուսուցիչ՝Թ. Գևորգյան

Ուսումնական հաստատություն՝Երևանի 131 հիմն. դպրոց

Երևան 2023

Հետազոտական աշխատանք

Գործնական աշխատանքի կազմակերպումը մայրենիի դասերին

Երևանի Պ. Յավորովի թիվ 131 հիմնական դպրոցի
դասվար Գևորգյան Թագուշ Ցոլակի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն_____ . 2

Գործնական աշխատանքների կազմակերպումը մայրենիի ուսուցման գործընթացում _____5

Եզրակացություն _____27

Գրականության ցանկ_____ 28

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պրակտիկայում առաջադրված խնդիրները լուծվում են տարբեր գիտութ յունների միջոցով Ավելին, այդ խնդիրների գիտական լուծումները փորձարկվում և ներդրվում են պրակտիկայում: Աշակերտին պետք է հասկանալի դարձնել տեսական հասկացությունների իմացության կարևորությունն ու նշանակությունը մարդու պրակտիկ գործունեության մեջ: Նա պետք է հասկանա, թե որքան կարևոր է ձեռք բերած տեսական գիտելիքները կյանքում հանդիպող առօրյա իրադրություններում կիրառել կարողանալը:

Աշակերտների մեջ նման կարողության (գործնական կարողության) առկայությունը նրանց իսկ կրթվածության (ուսումնառության) որակի հիմնական և գլխավոր ցուցանիշն է լինելու ողջ կյանքում: Այդ իսկ պատճառով շատ կարևոր է, որ ռաուցիչը ուսումնական գործընթացը կազմակերպելիս և իրականացնելիս հիմնական շեշտը դնի նաև աշակերտների մեջ գործնական կարողությունների ձևավորման և զարգացման հարցերի վրա: Հենց այս տեսանկյունից է, որ արժևորվում է գործնական աշխատանքի դերը՝ ոչ միայն որպես տեսական նյութի ամրապնդման միջոցի, այլև որպես սովորածը գործնականում կիրառելու հնարավորության: Կոնկրետ խնդիրներով ու բովանդակությամբ պայմանավորված, գործնական աշխա տանքները կարող են իրականացվել ինչպես դասերի ժամանակ, այնպես էլ դասերից դուրս: **Գործնական** անվանում են սովորողների կողմից կատարվող այն աշխատանքները, որոնք վերաբերում են նրանց ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների գործնական կիրառություններին:

Գործնական աշխատանքների հիմնական նպատակներն ու խնդիրներն են. Ձևավորել և զարգացնել սոցիալական

հմտություններ.

Մատուցել կիրառման համար անհրաժեշտ տեսական և գործնական նյութ. Նպաստել անհատի ինքնադրսևորմանը, կենսագործունեությանը և կրթության շարունակականության ապահովումը ուղղված հմտությունների զարգացմանը:

Գործնական աշխատանքների ընթացքում պետք է իրականացվեն այնպիսի գործողություններ, ինչպիսիք են գիտելիքների որոնումը, դրանց իմաստավորումը, ամրապնդումը, կարողությունների և հմտությունների ձևավորումը և զարգացումը, գիտելիքների ընդհանրացումը և համակարգումը: Որպես մանկավարժական երևույթ՝ գործնական աշխատանքը մի կողմից ուսումնական առաջադրանք է, այսինքն՝ այն, ինչ պետք է անի աշակերտը, մյուս կողմից՝ այդ առաջադրանքի կատարման ընթացքում համապատասխան գործունեության՝ հիշողության, մտածողության ստեղծագործական երևակայության դրսևորման ձև, որն արդյունքում աշակերտին տալիս է միանգամայն նոր, նախկինում նրան անծանոթ գիտելիքներ, կամ էլ արդեն ունեցած գիտելիքների խորացում: Սովորողներին ներկայացվող չափորոշչային և ծրագրային պահանջների համաձայն՝ մայրենիից նախատեսվում են տարբեր բնույթի ու տեսակի գործնական աշխատանքներ.

- Պատմության գծապատկերների կազմում՝ նախադասությունների համար գունային բաժանումներով,
- Բառերի, վանկերի կազմության գծապատկերներ,
- Դասանյութի մասերին համապատասխան բովանդակային կառուցվածքի գծակարգ.

Տեքստի սխալների ուղղում, խառնված հերթականության շտկում. գործնական գրություններ՝ նամակ, հասցե, հայտարարություն, գովազդային վահանակ, դասարանական

թերթ ստեղծելու և ձևավորելու աշխատանքներ

Տեքստի նկարագրդում,

Հեքիաթների հորինում, ինքնաշեն գրքերի նկարազարդում,

Զանազան տեղեկատվական աղբյուրներից /բառարաններ, մանկական հանրագիտարաններ, ուսումնական ձեռնարկներ/ որոնել, գտնել տեղեկություններ առաջադրված հարցերին պատասխանելու համար: Երեխան պետք է դառնա ուսումնական գործընթացի ակտիվ մասնակիցը:

Նպատակաուղղված աշխատանքի ընթացքում լուծվում են հետևյալ խնդիրները.

- ճանաչողական գործընթացի զարգացում /երևակայություն, ընկալում, հիշողություն/ մտածական գործընթացների զարգացում /համեմատում, վերլուծություն և գլխավորի առանձնացում, նյութի ամփոփում և համակարգում:
- Հետազոտական կարողությունների ձևավավորում և զարգացում, տեսնել անսովորը, ձևակերպել խնդիրը, ապացուցել գաղափարը, ձևավորել հետազոտական աշխատանքի արդյունքները,
- Ինքնակրթության կարողությունների ձևավորում, այսինքն՝ ակտիվ ճանաչողական գործողությունների ձևավորում.
- Սովորողների գրավոր և բանավոր խոսքի զարգացում.
- Համագործակցային և հաղորդակցային կարողությունների զարգացում.

Գործնական աշխատանքը կրում է սոսկ ուսուցանող բնույթ: Հիմնականում նպատակաուղղված է երևակայության ստեղծագործական մտածողության դիտարկման, հարցեր տալու կարողությունների զարգացմանը, որն էլ իր հերթին նպաստում է գործնական կարողությունների զարգացմանը:

Վարժությունների մի խումբ նպաստում է սեփական կարծիքը փոխելու, իրերն ու երևույթները տարբերակներից դիտարկելու կարողությունների զարգացմանը, ինչն էլ, իր հերթին գործնական աշխատանքն արդյունավետ հնարավորություն է ընձեռում:

Առաջին դասարանից սովորողներին անհրաժեշտ է սովորեցնել հետազոտական գործունեության հետևյալ ձևերին՝

- Մտածել ինքնուրույն
- Հարցնել մեկ ուրիշից
- Կարդալ գրքերում
- Դիտել հեռուստացույց
- Տեղեկություն ստանալ համացանցից
- Դիտարկումներ կատարել
- Փորձեր կատարել
- Հարցնել համապատասխան մասնագետներից:

Գործնական աշխատանքը ենթադրում է այնպիսի աշխատանք, որի կատարման ընթացքում աշակերտը հայտնվում է իր համար ոչ սովորական իրավիճակում, որտեղ անհրաժեշտ է հնարավորություն, ստեղծագործական մոտեցում, որպեսզի լուծի իր առջև դրված խնդիրը: Ընդ որում, գործնական աշխատանքները պետք է կազմված լինեն այնպիսի առաջադրանքներից, որոնք հնարավոր չէ կատարել առանց ուսումնական նյութի լավ իմացության:

Գործնական աշխատանքը ուսումնական գործընթացում յուրացված գիտելիք ների, կարողությունների և հմտությունների կիրառումն է:

Գործնական աշխատանքը ենթադրում է նախաձեռնություն ցուցաբերելու, կարողություն և հնարամտություն, ոչ ստանդարտ մտածողություն, ստեղծագործական մտածողություն, ինքնուրույն որոշում կայացնելու, անհրաժեշտ տեղեկատվություն որոնելու պատրաստակամություն: Դպրոցականների այնպիսի մտածողական գործ ընթացների զարգացմանը, ինչպիսիք են.

- Իր աշխատանքի գործողությունների ծրագրի կազմումը
- Դասակարգումը
- Ամփոփումը
- Տարբեր հնարավոր որոշումների ընտրությունը,
- Միևնույն իրը կամ երևույթը տարբեր տեսանկյուններից դիտարկումը,
- Տարբեր իրերի կամ երևույթների համեմատումը,
- Ինքնաստուգումը և այլն:

Գործնական աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել հետևյալ կանոնները՝

- ցանկացած գործնական աշխատանքը պետք է ունենա նպատակ,
- գործնական աշխատանքի ընթացքում երեխաները պետք է կարողանան կիրառել իրենց մինչ այդ յուրացրած գիտելիքներն ու կարողությունները,
- յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա կատարման ընթացքը և պետք է յուրացնի ինքնուրույն գործելու հնարքները,
- գործնական աշխատանքը պետք է համապատասխանի սովորողների կարողություններին:
- գործնական աշխատանքի ընթացքում ստացված արդյունքները կամ եզրահանգումները պետք է կիրառվեն ուսումնական գործընթացում:
- անհրաժեշտ է ապահովել տարբեր տեսակի գործնական վարժությունների համադրումը:
- գործնական աշխատանքի բովանդակությունն ու քայլաշարը պետք է հետաքրքրություն առաջացնի,
- գործնական աշխատանքը պետք է ապահովի սովորողների ճանաչողական տրամաբանական կարողությունների զարգացումը,
- գործնական աշխատանքի բոլոր տեսակները պետք է ապահովեն ինքնուրույն ճանաչողական գործողություն ծավալելու

կարողությունը:

Երևակայական Ճանապարհորդություն խաղալիքների քաղաքում

Այս թեմայի շուրջ մենք ճանապարհորդություն կկատարենք խաղալիքների քաղաքում, որտեղ կան շատ փողոցներ, որոնցով կշրջենք, կկատարենք այն հետաքրքրաշարժ առաջադրանքները, որոնք մեզ կառաջադրվեն:

Բայց մինչև այդ կազմվել էր հարցաթերթիկ, ինչի արդյունքների հիման վրա էլ ստեղծվեց այս գործնական աշխատանքը: Հարցաթերթիկին պատասխանել են 1-4 դասարանի աշակերտները.

Հիշո՞ւմ եք ձեր առաջին խաղալիքը:

Խաղո՞ւմ եք խաղալիքներով հիմա:

Ի՞նչ խաղալիքներ եք նախընտրում:

Ի՞նչ եք կարծում խաղալիքները ձեր խանգարու՞մ են, թե օգնում ուսման մեջ:

Ինչպե՞ս եք վերաբերվում համակարգչային խաղերին;

Մենք մեր ճանապարհորությունը կկատարենք հետևյալ փողոցներով՝ Հետաքրքրասերների փողոցով, Հետազոտողների փողոցով, Ստեղծագործողների փողոցով, Վարպետների փողոցով:

Ստեղծման պատմություն

Հայտնի է հնագույն ժամանակներից /Հին Եգիպտոս, մ.թ.ա. 3-րդ հազարամյակ/՝ մարդկանց, կենդանիների, աշխատանքի գործիքների, կենցաղային առարկաների տեսքով: Խաղալիքներ են հայտնաբերվել անտիկ դարաշրջանի /Հունաստան, Հռոմ/ մանկական գերեզմանատներում:

TX&^T*´
Я
tranges.biz

AMUZ

19-րդ դարի վերջից սկսվել է խաղալիքի արդյունաբերական արտադրությունը մետաղից, թաղանթանյութից, ապա /20-րդ դար/' պլաստմասայից և սինթետիկ նյութից:

Խաղալիքի արտադրությունը առավելապես զարգացած էր ԱՄՆ-ում, Ճապոնիայում, Գերմանիայում, Մեծ Բրիտանիայում, Իտալիայում:

ԽԱՂԱԼԻՔ

Խաղալիք, իր որն օգտագործվում է խաղալու համար: Վերստեղծելով իրական և երևակայական առարկաներ, կերպարներ: Խաղալիքը ծառայում է մտավոր, բարոյական, գեղագիտական և ֆիզիկական դաստիարակության նպատակով: Օգնում է երեխաներին ճանաչելու արտաքին աշխարհը, նպաստում մտածողության, հիշողության, խոսքի զարգացմանը: Խաղալիքն օգտագործվում է ռաումնա-դաստիարակչական աշխատանքի ընթացքում, երեխաներին ստեղծագործելու ունակությունները զարգացնելու նպատակով: Խաղալիքի տիպը, բնույթը, բովանդակությունը և ձևավորումը որոշվում է

ըստ կոնկրետ դաստիարակչական խնդրի, երեխայի տարիքին, զարգացման աստիճանին և հետաքրքրություններին համապատասխան:

Հետաքրքրասերների փողոց

Այստեղի բնակիչները շատ հետաքրքրասեր են և սիրում են հետաքրքրվել զանազան խաղալիքներով: Հետաքրքրության շնորհիվ նրանք իմացան, որ գոյություն ունեն խաղալիքների տարբեր տեսակներ՝

Կերպարային,
Ուսուցողական,
Տեխնիկական,
Թատերական,
Պարահանդեսային,
Երաժշտական,
Սպորտա-շարժիչային
Զվարճանքի,
Տոնածառի,
Փափուկ,
Հեռակառավարումով:

Այս փողոցում տրվում է այսպիսի առաջադրանքներ: Գրել՝ որն է ձեր ամենա սիրելի խաղալիքը: Ինչպե՞ս է այն ձեզ մոտ հայտնվել: Ինչո՞ւ է այն քեզ շատ սիրելի:

Իմ սիրելի խաղալիքը

Ինչպես բոլոր երեխաները՝ այնպես էլ ես ունեմ շատ սիրելի խաղալիքներ:

Սակայն նրանցից երկուսը ինձ համար առանձնահատուկ են: Ես շատ եմ սիրում փափուկ պանդա, որովհետև այն իմ առաջին խաղալիքն է: Այն

հայրիկս բերել էր Չինաստանից: Քանի որ ես այն շատ սիրեցի, բարեկամներս ինձ նվիրեցին շատ պանդաներ և հիմա ես ունեմ պանդաների մի մեծ ընտանիք: Երբ մի քիչ մեծացա, սկսեցի հետաքրքրվել լեգոներով: Ինձ շատ է դուր գալիս մանր մասնիկներով տարբեր բաներ պատրաստել: Լեգոներով կառուցել եմ հյուրանոց, բնակարան, սրճա բան, գեղեցկության սրահ:

I

Դանիելն ասաց՝

-Երբ ես 5 տարեկան էի, հորեղբայրս ինձ. հեծանիվ գնեց: Ես շատ ուրախացա: Հեծանիվը դարձավ իմ առաջին Փոքրիկ փոխադրամիջոցը, ես նրան հաճախ անվանում էի <<մեքենաս>> ձգտելով նմանվել հայրիկիս, երբ նա խոսում էր իր մեքենայի մասին:

II դաս Արման

Հետազոտողների Փողոց

Հետազոտողների փողոցի բնակիչները սիրում են հետաքրքրվել անցյալով: Այս փողոցում նույնիսկ խաղալիքների թանգարան կա, որտեղ պահպանվում են հին խաղալիքներ: Այս թանգարանում ամեն տարի ավելանում են ցուցանմուշները, որպեսզի շատ տարիներ անց երեխաները իմանան թե ինչ խաղալիքներով են խաղացել իրենց ծնողները, տատիկներն ու պապիկներն անցյալում:

Թանգարաններ

Աշխարհի որոշ երկրներում կան խաղալիքների թանգարաններ: Այդպիսի մի թանգարան կա Ռուսաստանի Դաշնությունում՝ Սերգիև Պասադում այն մոտավորա պես 100 տարեկան է: Խաղալիքների թանգարանում ցուցադրվում են տարբեր ժողովուրդների և ժամանակաշրջանների խաղալիքների հսկայական հավաքածուներ: Այնտեղ կա մոտ 300.000 տեսակի խաղալիք:

RECOMMEND.RU

Երևանում էլ են գործում տիկնիկային թանգարաններ՝ Լուսիկ Ագուլեցու տուն- թանգարանը և Տիկնիկային թատրոնին կից Մարինա Խաչմանուկյանի հեղինակային թանգարանը:

Լուսիկ Ագուլեցու թանգարանում պահվում են զանազան ծիսական տիկնիկներ:

Հնարավորություն կա նաև մասնակցելու տիկնիկների պատրաստմանը:

Հայկական ծիսական տիկնիկներ

Հայկական մշակույթի ամենագեղեցիկ, խորհրդանշական արժեքներից են հայոց ծիսական տիկնիկները: Ժողովուրդը օժտել է մոգական ուժով, չարը խափանող, վտանգից ու չարից զերծ պահող հատկություններով: Տիկնիկների միջոցով ձգտել են ապահովել բերք ու բարիքի առատությունը, պտղաբերությունը, ընտանեկան և անձնական հաջողությունները:

Այսօր մեզանում քիչ թե շատ հայտնի տիկնիկի Նուրի տիկնիկն է և նրան ուղեկցող ծեսը: Հայերը պատրաստել են տիկնիկներ, որոնք կապվված են եղել անձրևի և երաշտի հետ: Տարբեր գավառներում նրանք տարբեր անվանումներ ունեին, բայց ամենատարածված տարբերակը Նուրին էր կամ Անձրևի հարսը: Նուրին հայտնվում էի Ծաղկազարդ տոնին և երաշտ եղած ժամանակ: Նա սիրունիկ էր, բարեսիրտ, նրա աչքերից էին ծնվում շաղն ու ցողը, անձրևի կաթիլները: Երբ մարդ ու կենդանի տառապում են ջրի պակասից: Նուրին արտասվում է և նրա արցունքներով թրջված հողն ու արտերը կենդանանում են, ծիլ ու ծաղիկ տալիս:

Նուրիի ծաղիկը նկարազարդ էր, մեջքի գոտին ծիածանն էր: Աղջիկ երեխաները երգելով ու պարելով, պտտեցնում էին նրան տուն առ տուն և տիկնիկի համար ալյուր, ձու և այլ մթերքներ հավաքում: Նուրիի վրա անընդհատ ջուր էին լցնում: Երեխաները հավաքած բարիքներով հետո կամ խնջույք էին անում կամ էլ վաճառում էին դրանք և ստացված փողերով դարբնին պատվիրում էին մետաղյա մի տիկնիկ պատրաստել, որը թողնում էին գյուղի սրբավայրում: Նուրիին ուղեկցող ծեսը կարևոր էր հայ գյուղացու համար:

Տարտուի խաղալիքների թանգարան

Ամենամեծ թանգարանը Մերձբալթիկայում է : Թանգարանում ցուցադրված են ավելի քան 5000 խաղալիք: Թանգարանում մի շարք խաղալիքներ կարելի է փորձարկել, իսկ երեխաների համար կա առանձին խաղասենյակ:

Թանգարանի թալիսմանը Ծաղկաթաթ Թեղի արջուկն է, որ 1994թ. կարվել էԿաի Մասերի կողմից: Արջուկն այդպես է անվանվել, որովհետև նրա թաթերը կատարվել են ծաղկավոր կտորից: Ծաղկաթաթ Թեդի մասին գրքեր են գրել,բացիկներ հրապարակել, նկարահանել կինոյում և այլն:

Օճառե պղպջակ

Օճառի պղպջակը բարակ օճառաջրի շերտ է, որը լցված է օդով: Նա գոյատևում է մի քանի վայրկյան: Պատրաստման մի քանի եղանակ կա, որը երկարացնում է պղպջակի կյանքը: Եթե վերցնել ջուրը և օճառը և ավելացնել շաքար ու գլիցիրին պղպջակները կլինեն ոչ այնքան մեծ, բայց երկար կգոյատևեն օդում: Որպեսզի պատրաստել մեծ պղպջակ, պետք է վերցնել երկու փայտիկ և իրար միացնել պարանով:

Օճառի ճամփորդությունը

Բարև, ես օճառե պղպջակն եմ: Ես ունեմ երկար պատմություն: ճամփորդենք հին աշխարհ: Հին Հռումում գտել են նկարներ, որտեղ երեխաները խաղում են օճառե պղպջակներով: Հին Չինաստանում գտել են հատուկ փայտիկներ, որոնցով ստացել են օճառե մեծ պղպջակներ: Նույնիսկ ես կամ եգիպտական պապիրուսների վրա, որոնք ունեն 3500 տարվա պատմություն: Այսօր էլ ես ուրախացնում եմ երեխաներին:

Բարբի

Բարբի տիկնիկը մանկական խաղալիք է, որով հիմնականում խաղում են 3- 14տ. աղջիկները, շուկայում հայտնվել է 1959թ. Ամերիկայում: Տիկնիկը մշակել է էլիոթ Հանդլերը: Նրա խոսքերով իր աղջիկը' Բարբարան (որի անունով կոչվել է

Բարբի տիկնիկը) իր մանկության տարիներին հաճախ էր խաղում իր ընկերների հետ տիկնիկներով: Նա ստեղծեց գեղեցիկ ու հմայիչ տիկնիկին: Այսօր Բարբին ունի հսկայական զգեստապահարան, զարդեր, կահույք և մեքենաներ: Ունի նաև քույրեր, եղբայրներ, ընկերուհիներ, նույնիսկ՝ փեսացու: Նա հանդես է գալիս որպես երգչուհի, բուժքույր և այլ կերպարներով: Այսօր Բարբին հայտնի է ողջ աշխարհում:

Ստեղծագործողների փողոց

Այս փողոցում ապրում են բանաստեղծներ, հեքիաթասացներ, ստեղծագործ մարդիկ: Առանց նրանց խաղալիքների քաղաքում ուրախ չէր լինի:

Բանաստեղծություններ մեր բանաստեղծներից

Ձի', ձի', փայտե ձի,
Մեր դռանը կապեցի,
Սիրուն, սիրուն ներկեցի, Հետո նրան թամբեցի... Ով որ ունի այսպես ձի,
Թող գա ինձ հետ նա մրցի

Տիկնիկ ունեմ՝ ծաղրածու է, Քիթը' հավի ներկած ձու է,

Հագնում է նա փքված մի շոր, Կոշիկներն են խոշո՛ր, խոշո՛ր: Երբ նրա հետ ես խաղում եմ՝ Ուրախ-ուրախ ծիծաղում եմ:

Ջան, իմ գնդակ, իմ գնդակ, Կանաչ, կարմիր, կապուտակ, Թռիր վերև, իջիր ցած, Չալոն մնա զարմացած: Գլոր-Գլոր գլորվիր, Թփերի մեջ մոլորվիր,

Ուր որ գնում ես ինքն է քեզ տանում Սար
բածրանալիս դու ես վեր հանում Վազող
գործիք է, ունի ղեկ ու սանձ, Ինչպես են
կոչում բոլորը նրան:

Փիսոն գտնի խտտի, խունջիկ-մունջիկ պտտի

Իսկ հիմա ստեղծագործում են երեխաները

Խաղալիքների աշխարհում Ամեն մարդ է մանկանում Ղեկով վարում, տանկ քշում, Ավազ մաղում, փակցնում Սարով կիթառ նվագում Ինչքան ուրախ է անցնում Քրքիջ, ծիծաղ պարգևում:

Անի II դ.

Փոքրիկ ձիուկը (հեքիաթ)

Փոքրիկ տղան ուներ շատ խաղալիքներ: Խաղալիքները նրա համար առանձնահատուկ տեղ ունեին: Առանց նրանց տղան դառնում էր ալարկոտ դանդաղաշարժ: Ժպիտն էլ սառչում էր նրա աչքերում: Բայց երբ տեսնում խաղալիքների միջից իր փոքրիկ ձիուկին, երբեք չէր կարողանում զսպել հուզմունքը: Ձիուկը կախարդել էր նրան: Շատ ժամանակ քնում էր ձիուկին գիրկը ու երազներ էր տեսնում տարբեր-տարբեր: Երբեմն էլ թվում էր, որ ձիուկը թևեր ունի ու թռչում էր երկնքում: Ցանկանում էր բռնել բայց չէր կարողանում: Տղան վրդովվում էր ու լաց լինում: Մայրիկի հարցին, թե ինչու ես լալիս, նա պատասխանում էր, - ձիուկս փախավ:

- Նա քո կողքին է տղաս:

Տղան տեսնելով իր կողքին ձիուկին, հանգստանում է ու քնում:

Երազում տեսնում է, որ իր փոքրիկ խաղալիք ձիուկը վերափոխվում է, մեծանում ու դառնում է իսկական ձիուկ: Վախենում է, ցանկանում է փախչել, բայց ձիուկը ասում է.

- Ես խաղալիք չեմ, ես իսկական ձի եմ, երբ որ մեծանաս մենք իրար հետ ընկերություն կանենք: Ես քեզ կտանեմ ուր որ ցանկանաս:

Նժդեհ II դաս.

Վարպետների փողոց

Վերջապես հասանք չորրորդ փողոցին, որը կոչվում է Վարպետների փողոց: Փողոցի անունը հուշում է, որ երեխաները իրենք են պատրաստելու իրենց խաղալիք ները:

Կան երեխաներ, որոնք պատրաստեցին այն խաղալիքները, որոնք պատրաստել էին իրենց տատիկները: Օրինակ՝ փայտե տիկնիկ: Օգտագործվում է մատիտ, թել, կոճակ, ժապավեն, կտոր:

տիտ, թել, կոճակ, ժապավեն, կտոր:

Հաջորդ գործնական աշխատանքը ձնեմարդու պատրաստումը: Օգտագործել ենք' գուլպա, ժապավեն, բրինձ (կամ ոսպ), կոճակ, թել:

Եզրակացություն

Այսպիսով՝ տարրական դասարաններում կիրառելով **գործնական աշխատանք** բաղադրիչը ձևավորում ենք այնպիսի կարևոր կարողություններ և հմտություններ, որոնք վերառարկայական են և պետք են աշակերտին ողջ կյանքի ընթացքում: Մասնավորապես՝ սովորողները՝

- զարգացնում են իրենց աշխահաճանաչողական գիտելիքները,
- ձեռք են բերում սոցիալական հմտություններ,
- իրենց աշխատանքներում դիտարկում են տեսականի և գործնականի կապը,
- ինքնադրսևորվում են, ինքնակազմակերպվում են,
- ուսուցանվող առարկան դառնում է նրանց համար ավելի հետաքրքիր, լինում են մոտիվացված, քանի որ ամեն ինչ անում են իրենց նախասիրությունների շրջանակում և ներգարվված են համընդհանուր ուսումնական գործունեության մեջ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան Գործնական աշխատանքներ մայրենիից, Զանգակ 2017
2. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, 50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչների համար: Մաս I, «Զանգակ» հրատարակչություն, 2013թ.
3. Горностаева З. Я “Проблема самостоятельной познавательной деятельности” // Открыт. школа. - 1998. - №2